**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/49-Հ1**
**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/49 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ**
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «22» «04» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Օհանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 2020 թվականի օգոստոսի 27-ին կնքված թիվ ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/49 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2021 թ. մարտի 25-ի թիվ 397-Ն որոշման 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 4.1 կետով նախատեսված մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը ավելացնել 27000 (Քսանյոթ հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

1.1.2 Սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունները մատուցել սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.1.3 Սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարումն իրականացնել համաձայն սույն համաձայանգրի թիվ 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցի:

1.1.4 Սույն համաձայնագրով նախատեսված ծառայությունների մասով Պայմանագրի 3.3 կետով նախատեսված Պատվիրատուի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունների ընդունման կամ մերժման ժամկետ սահմանել դրանք ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3<br>Կառավարական տուն 2,<br>ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011035127<br>ՀՎՀՀ 02698732 | «Երևաննախագիծ» ՓԲԸ<br>Հասցեն՝ ք. Երևան, Փ. Բյուզանդի 1/3<br>Հեռ.՝ (010) 562-711<br>էլ. փոստ՝ yerpro@yandex.ru<br>«Էվոկաբանկ» ՓԲԸ,<br>Հ/Հ 1660000215670100,<br>ՀՎՀՀ 02500241 |
| **Գլխավոր քարտուղարի տեղակալ՝** | **Տնօրեն՝** |
| ------------------------- Վ. Գասպարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ------------------------- Ս. Օհանյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված թիվ 1
« 22 » « 04 » 2021 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/49-Հ1 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը ՀՀ դրամ, | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 98111140/8 | հեղինակային հսկողության ծառայություններ | «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի հասարակական զուգարանների, դիմահարդարման սենյակների և ձեղնահարկի վերանորոգման լրացուցիչ աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | դրամ | **27000** | 1 | ք. Երևան, Թումանյան 54 | Մշակութային օբյեկտի վերանորոգման աշխատանքներին զուգահեռ, մինչև 2021թ հուլիսի 1-ը ներառյալ: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

________________ **Վ. Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

________________ **Ս. Օհանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 22 » « 04 » 2021 թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-20/49-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին, ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | |
| | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 98111140/8 | հեղինակային հսկողության ծառայություններ | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27000 | 27040 | 27040 | 27040 | 27000 | 27000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վ. Գասպարյան
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Ս. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ